

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՕԳՏԱԿԱՐ ԳԻՒՏԵՐ

I ԴԵՐՈՒՆ ԴԵՋ ԴԵՂ:

Հիւ ձէթի մրուրով գետինը եղուտէ, հոն ամենեւին լու չըլլար:

Ղարձեալ, վայրի վարունգը՝ ծեծէ, քսանուչորս ժամջուրը դիր, անջրով տունը՝ շապիկդ՝ անկողինդ ջրուտէ, գտնուած լուերը բոլորը կը հաւաքուին:

Ղարձեալ, փշատի՝ տերեւը առ՝ ծեծէ. տան մէջտեղը փոս մը բաց, զանի մէջը լից. ամէնքը հոն կը ժողվին. աւլէ հողը՝ հոն ժողվէ, և վրան ջուր լից, կը ջարդին կը հատնին, դուն ալ կ'ազատիս:

Փորձուած է որ, ուր տեղի հողը բորակաւոր է, հոն լու չըլլար. բայց տեսակ մը հող ալ կայ որ կը սիրէ, հոն խիստ շատ կ'ըլլայ:

II ԼՈՒՆՆԻՆ՝ ԴԵՂ:

ԿՈՎՈՒ լեղին կտաւատի եղով՝ խառնէ, բոյներնուն զարկ, ամէնքը կը ջարդուին:

Ղարձեալ, արջասպը՝ բարկ քացախով խառնէ, նոյնպէս բոյներնուն զարկ, կը ջարդէ:

Ղարձեալ, վայրի վարունգին արմատը ջրով եփէ՝ զարկ եղած տեղերնին, հոտէն ամէնքը կը ջարդին:

Ղարձեալ, մարդու փակցուցած տղրուկին՝ արիւնը առ, տանդ մէջը լինչ տախտակ որ պիտի գամես նէ՝ զարկ ան տեղին ներքեւն ու վրան, մըլուկ չըլլար:

Ղարձեալ, ընկուզի ծառին ծա-

1 Եռան խլուր:

2 Իյդէ:

3 Թահրապիթի:

4 Պէշիւր Եռլ:

5 Ձաճ Գըրըլ:

6 Սիւլի:

ղիկն առ՝ չորցուր, գարնան բերանը անով աղէկ մը ծուխ տուր, բոլոր մըլուկները կը ջարդուին:

ՆԱԽԵՐԸ պահպանել ամէն ներդ շնաստիար նենդանիներէ:

I ԴԵՂԻ բակլայ, վայրի վարունգին միջուկը, յիսունական տրամ, ճզմէ, վրան ալ վեց օխայ ջուր լից, թող մնայ քսանուչորս ժամ. աս ջրէն ծառերուն վրայ սրսկէ, բոլոր փնասակար կենդանիներն ու թրթուրները կը սատկին, անանկ որ նաև մարախն՝ ալ ան ծառը չկրնար ուտել. թէ որ ուտել սկսի նէ, սոսկ լեղի բակլան ու վայրի վարունգին միջուկը ծխէ տակը, կը թափին թէ ծառին վրայ եղածները, թէ օդուն մէջ թռչողները. և տանդ մէջ աս ծուխն որ տաս նէ, կարիճ և ուրիշ կենդանիներ կան նէ՝ կամ կը փախչին կամ կը սատկին:

ՆԱԽԵՐԸ որ գէշ հոմէ դարնուն՝ անոնց դէղ:

I ԵԳԻՒՆ ու պարտիզին գէշ հով զարնէ նէ, տերեւները կը դեղնին ու կ'աւրին. առ եղնիկի եղջիւր՝ ու այծու աղը, պարտիզին չորս կողմը ծխէ որ ծուխը դեղնցածներուն դպչի, տերեւները ալ չեն թողմիր ու չեն թափիր:

Ղարձեալ, վայրի վարունգին արմատը եփէ, ջուրը դեղնած տերեւներուն վրայ սրսկէ, աս ալ կ'աղէկցընէ. փորձուած է:

ՆԱԽԵՐԸ որ պարտիզը չէ Բաթէ, անոր դէղ:

II ԱՅՐԻ կաղնիին՝ մոխիրը ջուրը դիր, ան ջրով ծառին արմատը ջրէ, ալ պտուղը չիթափեր. ծովի ջուրն

1 Չեփիլէ:

2 Կէրի պոյնուլ:

3 Փէլի:

ալ նոյնպէս կ'օգնէ :

Պարձեալ, ծառին վերը՝ նոր ծած
ճիւղերուն ծայրէն տաանուհինգ հա-
տի մը չափ պտղովը կտրէ , ալ պտու-
ղը չթափիր :

Նոսրերը որ էն ճաւերդին , անոր դեղը :

Սէկ թիղ մը արմատը բաց , աւազ
ու վայրի կաղինի մոխիր աղէկ մը
խառնէ , տակը լից , ծառին ճեղքերը
կը միացնէ :

Ներադաժ այգին նորոգել :

Միւս որթին՝ մէկ կողմը իրեք ի-
րեք թիղ փոս փորէ . երկերկու հատ
աղէկ ուռերէն պառկեցու մէջը՝ ա-
ռանց կտրելու , միւս ծայրն ալ ան-
դին դուրս մնայ . վրան հող լից , և
աղէկ կոխէ . ասի ըրէ այգիդ յօտելու
ատենդ . թէ պտուղը աղէկ կ'ըլլայ , և
թէ երկու տարուան մէջ նոր այգի
կ'ըլլայ :

Որտ ընկած ծառին դեղ :

ՆԱՌԻՆ տակը բաց , որդին ծակե-
րը գտիր՝ որդերը կոտորտէ . ան ծա-
կերուն մայր փայտէ սեպեր յար-
մարցուր , ու ձիւթի մէջ թաթխէ՝
ծակին վրայօքը զարկ :

Պարձեալ, նուռի կեղեւը բարակ
ծեծէ , աղի ջուրը դիր , ու խառնե-
լով որդերուն ծակերը լից . աւելցուք
ջուրը արմատին լից , բոլորն ալ կը
ջարդուին :

Պ . Պ

1 Ամա :

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Յոբէր :

Մը գործիքը սիփոնի նման ծուռ
խողովակ մըն է , թւերուն մէկը եր-
կայն՝ մէկալը շատ կարճ , և երկու
ծայրերը մէյմէկ գնտակ կան՝ իրար-
մէ տարբեր մեծութեամբ . այսինքն
երկայն թւին ծայրինը՝ կարճ թւին
ծայրինէն պզտիկ է : Նրբոր կ'ուզես
ջուրը սառեցնել , պէտք է կարճ թւի
գնտակին ինչուան կէսը ջուր լեցնես ,
ու խողովակին մէջի օդը վրայի բարակ
ծակէն դուրս հանես՝ խողովակը տաք-
ցնելով , կամ օդահանին ընդունարա-
նին տակը դնելով և կամ ուրիշ կեր-
պով մը , անանկ որ խողովակը բոլոր-
վին դատարկանայ . ան պզտի ծակն
ալ ամուր մը գոցէ որ դրսի օդը ներս
չմտնէ : Հիմա թէ որ խողովակին
մեծ թւին ծայրի պարապ գնտակը
բնական սառուցի կամ թէ ցրտացու-
ցիչ բաղադրութեանց մէջ խոթես ,
աս դատարկութեան մէջ ջրէն ելած
գոլորշիքը խողովակին մէջ կը լեցուի ,
խտանալով ջուր կը դառնայ ու պա-
րապ գնտակին մէջ կը վազէ . անով
խողովակը նորէն կը դատարկանայ .
մեծ գնտակէն դարձեալ գոլորշիք կ'ել-
լէ ու առջինին պէս խտանալով ջուր
կը դառնայ ու պզտի գնտակին մէջ
կը վազէ . այսպէս հետզհետէ մեծ
գնտակին մէջի ջուրը իր բնական ջեր-
մութիւնը երթալով կը կորսնցնէ ,
ու քանի մը վայրկենի մէջ մեծ գնտա-
կին մէջ մնացած ջուրը սառ կը դառ-
նայ :

1 Գշ . Cryophore.